«Դիլիջան» ազգային պարկի
քայլարշավային արահետներ,
պատմամշակութային հուշարձաններ
Tourist informational booklet about the
hiking trails, historical and cultural
monuments of
"Dilijan" National Park

# Զբոսաշրջային արահետներ
# Tourist trails

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն
«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ

"DILIJAN NATIONAL PARK" State
Non-Commercial Organization
MINISTRY OF ENVIRONMENT
OF THE REPUBLIC OF ARMENIA

«Դիլիջան» ազգային պարկը պետական ոչ առևտրային կազմակերպություն է և ստեղծվել է 2002 թ.-ին (փոխարինելով 1958 թ-ին հիմնադրված պետական արգելոցին): Նպատակ՝ հետապնդելով ապահովել լանդշաֆտների և կենսաբազմազանության պահպանումը, համահունչ տնտեսական զարգացումը, ինչպես նաև պատմամշակութային ժառանգության պահպանությունն Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Ազգային պարկի տարածքը կազմում է 33765 հա: Զբաղեցնում է հիմնականում Տավուշի մարզը, փոքր հատվածներով նաև՝ Գեղարքունիկի և Լոռու մարզերը: Ազգային պարկն ունի լավ հնարավորություններ էկոտուրիզմի և բնապահպանական կրթության զարգացման, ինչպես նաև ժամանցի կազմակերպման համար: Պարկը հարուստ է ոչ միայն բնության հուշարձաններով այլ նաև ունի հարուստ պատմամշակութային ժառանգություն, որոնք առանձնահատուկ գրավչություն են տալիս պարկին:
Վաղ քրիստոնեական ժամանակաշրջանի ամենանշանակալից մշակութային հուշարձաններն են Հաղարծինի վանքը (10-րդ 13-րդ դդ.), Գոշավանքը (12-13-րդ դդ.), Ջուխտակ վանքերը (11-րդ, 13-րդ դդ.), Մաթոսավանքը (10-13-րդ դդ.), Աղավնավանքի եկեղեցին (11-րդ դ.):

"Dilijan" National Park is a state non-commercial organization that was established in 2002, replacing the state reserve established in 1958. Its aim is to ensure the preservation of landscapes and biodiversity, promote consistent economic development, and protect the historical and cultural heritage of the Aghstev and Getikriver basins. The territory of the national park covers 33,765 hectares, primarily located in Tavush Province, with small parts extending into Gegharkunik and Lori provinces. The national park offers excellent opportunities for the development of ecotourism and environmental education, also as well as for entertainment activities. It is not only rich in natural monuments but. possesses a significant historical and cultural heritage, which adds to its appeal. The most notable cultural monuments from the early Christian period include the Haghartsin Monastery (10th-13th centuries), Gosavank (12th-13th centuries), Jukhtak Monastery (11th-13th centuries), Matosavank (10th-13th centuries), and Aghavnavank Church (11th century).

«Դիլիջան» ազգային պարկ» -ը ներկայումս ունի տարբեր երկարության և բարդության 23 քայլարշավային և 1 հեծանվային երթուղիներ: Արահետները կահավորված են ուղղորդիչ նշաններով և

Միջնադարյան վանքերի արահետ
Թաքնված ջրվեժի արահետ
Բնության ուղտի արահետ
Բյուրեղյա արահետ
Երկնքի հայելու արահետ
Կենու պուրակի արահետ
Ապակեքար արահետ
Երեք գագաթների արահետ
Վանականի արահետ
Շշնջացող ջրվեժի արահետ
Երկնային զբոսանքի արահետ
Անտառի արքայի արահետ

Պարզ լճի շրջանաձև արահետ
Պանոռամա արահետ
Կարասի ջրվեժի արահետ
Բնության հետ կապի հեծանվային ուղի
Խաչարձանից Գոշ լիճ
Գոշ լճից Գոշավանք
Գոշավանքից Պարզ լիճ
Պարզ լճից Դիլիջան (Թախտա)
Թախտայից Դիլիջանի կենտրոն
Դիլիջանից Ջուխտակ վանքեր
Ջուխտակ վանքերից Հաղարծնի վանք
Հաղարծնի վանքից Հովք

# Արահետների բնութագրեր

## Միջնադարյան վանքերի արահետ

Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 3,8 / 2,3 (միակողմանի)
Միջին տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Բարդությունը՝ միջին
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1419 / 4655
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1530 / 5020
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային հանգույց
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Ջուխտակ վանք, Մաթոսավանք, հնագույն խաչքարեր, սանհանգույց, դիտակետեր, սնկեր, մրգատու ծառեր:

## Թաքնված ջրվեժի արահետ

Ճանապարհի երկարություն ( կմ / մղոն)՝ 3,3 / 2,0 (երկկողմանի)
Միջին տևողություն՝ 1 ժամ 30 րոպե
Բարդությունը՝ միջին
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1435 / 4709
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1535 / 5036
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային հարահետ՝ հետադարձով
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Հաղարծին վանք, միջնադարյան խաչքարեր, հնագույն մատուռներ, խորհրդային ժամանակների ճոպանուղու կիսակառույց լքված շինություն, դիտակետեր, երկրաբանական գոյացություններ, սնկեր, դեղաբույսեր, անտառային ջրվեժ:

## Բնության ուխտի արահետ

Ճանապարհի երկարություն  (կմ / մղոն)՝ 12,0 / 7,4 (միակողմանի)
Բարդություն՝ շատ բարդ
Միջին տևողություն՝ 6 ժամ
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1440 / 4724
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 2156 / 7073
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային  գծային հարահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Շամախյան թաղամաս, Գուգարաց լեռներ, Բովաքարի լեռներ, Հաղարծին վանք, միջնադարյան խաչքարեր, հնագույն մատուռներ, խորհրդային ժամանակների ճոպանուղու կիսակառույց լքված շինություն, դիտակետեր, սնկեր, դեղաբույսեր:
կիսակառույց լքված շինություն, դիտակետեր, երկրաբանական գոյացություններ, սնկեր, դեղաբույսեր, անտառային ջրվեժ:

**Բյուրեղյա արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 5,02 / 3,11 (միակողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 2 ժամ 30 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1220 / 4002
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1554 / 5,098
Մակերևույթ՝ գրունտային ճանապարհներ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային  գծային հարահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Պարզ լիճ, Գոշ գյուղ, խաչքարեր, վայրի մրգատու ծառեր, սնկեր, դեղաբույսեր, դիտակետեր, երկրաբանական գոյացություններ, ժայռեր և ապառաժներ, մարգագետիններ, զիփլայն և հանրային հանգստյան գոտի:

**Երկնքի հայելու արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 9,04 / 5,62 (միակողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 3 ժամ 45 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1336 / 4383
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1764 / 5,787
Մակերևույթ՝ գրունտային  ճանապարհներ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային  գծային հարահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Դիլիջան քաղաքի արվարձաններ, ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն, Թթու ջուր, Պարզ լիճ, զիփլայն և հանրային հանգստյան գոտի, սնկեր, դեղաբույսեր, ֆերմերային տնտեսություններ, խաչքարեր, համայնապատկերներ:

**Կենու պուրակի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 3,0 / 1,8 (երկկողմանի)
Բարդություն՝ հեշտ
Միջին տևողություն՝ 1 ժամ 10 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1197 / 3927
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1368/ 4488
Մակերևույթ՝ գրունտային նեղ  ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային  հանգույց
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Աղավնավանք գյուղ, Գետիկ գետ, 12-13-րդ դարի կամուրջ Աղավնավանք Սբ   Աստվածածին եկեղեցի, վանականի կացարանի ավերակներ, Կենու պուրակ, վրանատեղի, սանհանգույց:

**Ապակեքարի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 9,3 / 5,7 (միակողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 4 ժամ
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1055 / 3461
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1627 / 5337
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային գծային արահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Ապակեքար լեռ, խմելու ջրի աղբյուրներ, նախագավիթ, փոքր լճեր, դիտակետեր, սնկեր, Հովք գյուղ, խորհրդային ժամանակաշրջանի մեքենաներ և տներ, հին գերեզմանոց, դեղաբույսեր:

**Երեք գագաթների արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 12,1 / 7,51 (երկկողմանի)
Բարդություն՝ շատ բարդ
Միջին տևողություն՝ 5 ժամ 15 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1522 / 4993
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 2388 / 7834
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և լեռնային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային արահետ՝ հետադարձով
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Շամախյան թաղամաս, Գուգարաց լեռներ, Բովաքարի լեռներ, Հաղարծին լեռ, դիտակետեր, հայկական ոճով լեռնային տնակներ, սանհանգույց, Անձավաբացատ լեռ, Արևելյան Այրիքար լեռ, Եղեգնասար լեռ, Արևմտյան Այրիքար լեռ, հրաբխային ժայռեր, երկրաբանական և այլ առանձնահատկություններ, վայրի մրգատու ծառեր, դեղաբույսեր:

**Վանականի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 2,23 / 1,38 (միակողմանի)
Բարդություն՝ հեշտ
Միջին տևողություն՝ 1 ժամ 25 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1428 / 4685
Առավելագույն բարձրություն(մետր / ոտնաչափ)՝ 1186 / 3891
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային գծային արահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Գոշավանք, Գոշ գյուղ, Գոշ լիճ, դիտակետեր, համայնապատկեր, ժայռեր և ապառաժներ, խմելու ջրի աղբյուր, փայտյա կամուրջ, սանհանգույց:

**Շշնջացող ջրվեժի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 6,2 / 3,8 (երկկողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 1 ժամ 45 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1220 / 4002
Առավելագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1357 / 4452
Մակերևույթ՝ լքված երկաթուային գծեր և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային արահետ՝ հետադարձով
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ խորհրդային ժամանակաշրջանի երկաթուղային գծեր և երկաթուղային կայան, վայրի մրգատու ծառեր, սնկեր, դեղաբույսեր, երկրաբանական գոյացություններ, ժայռեր և ապառաժներ, դիտակետեր, պատշգամբի նման բարձր ապառաժ, վայրի թռչուններ, շշնջացող ջրվեժ, անտառի հեքիաթային տեսարաններ:

**Երկնային զբոսանքի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 11,2 / 7,00 (միակողմանի)
Բարդություն՝ շատ բարդ
Միջին տևողություն՝ 7 ժամ 30 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1424 / 4671
Առավելագույն բարձրություն(մետր / ոտնաչափ)՝ 2515 / 8251
Մակերևույթ՝ գրունտային նեղ  ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային արահետ՝ հետադարձով
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Արբած անտառ, Տրանսկովկասյան արահետ, սահիանգույց, խորհրդային ժամանակների առողջարաններ, Պուճուր Դիլի լքված բնակատեղի, Պարզ լիճ, դիտակետեր, Դիլիջանի համայնապատկերներ, երկրաբանական գոյացություններ, ժայռեր և ապառաժներ, վայրի մրգատու ծառեր, մարգագետիններ, Լճասար լեռ, Խաճկաբակ լեռ, Եղջերվասար լեռ, Մեծ Մայմեխ լեռ, Փոքր Մայմեխ լեռ:

**Անտառի արքայի արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 3,6 / 2,2 (միակողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 1 ժամ 20 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1255 / 4117
Առավելագույն բարձրություն(մետր / ոտնաչափ)՝ 1481 / 4858
Մակերևույթ՝ գրունտային նեղ  ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ քայլարշավային  գծային արահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ հին քարանձավ անտառում, «Անտառի արքայի արձանը» խմելու ջրի աղբյուր, վայրի ծառեր ու սնկեր, դիտակետեր, հուշարձան երկրորդ աշխարհամարտում զոհավծների, Աղստև գետ:

**Բնության հետ կապի հեծանվային ուղի**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 29,3 / 18,2 (միակողմանի)
Բարդություն՝ միջին
Միջին տևողություն՝ 6 ժամ
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1128 / 3700
Առավելագույն բարձրություն(մետր / ոտնաչափ)՝ 1536 / 5039
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ լեռնահեծանվային արահետ՝ հետադարձով
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ խորհրդային ժամանակների շինություններ, խորհրդային Իմպուլս գործարան, ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոն, Պարզ լիճ, միջնադարյան խաչքարեր, խմելու ջրի աղբյուր, նախագավիթ, Տրանսկովկասյան արահետի մի հատված, հետիոտնի կամուրջներ, դիտակետեր, վայրի ծառեր ու սնկեր, դեղաբույսեր:

**Պարզ լճի շրջանաձև արահետ**
Ճանապարհի երկարություն (կմ / մղոն)՝ 3,1 / 1,9 (միակողմանի)
Բարդություն՝ հեշտ
Միջին տևողություն՝ 1 ժամ 15 րոպե
Նվազագույն բարձրություն (մետր / ոտնաչափ)՝ 1290 / 4232
Առավելագույն բարձրություն(մետր / ոտնաչափ)՝ 1385 / 4543
Մակերևույթ՝ գրունտային նեղ ճանապարհ և անտառային արահետներ
Տեսակ՝ հանգուցային քայլարշավային արահետ
Տեսարժան վայրեր և կանգառներ՝ Պարզ լիճ, միջնադարյան խաչքարեր, խմելու ջրի աղբյուր, նախագավիթ, Տրանսկովկասյան արահետի որոշ հատված, հետիոտնի կամուրջներ, դիտակետեր, սնկեր, դեղաբույսեր:

**Կարասի ջրվեժ**
«Կարասի ջրվեժ» անվանվամբ նոր արահետը, գտնվում է «Հաղարծին» տեղամաս» մասնաճյուղում, իր մեջ ներառում է գեղեցիկ ջրվեժ և կիսականգուն մատուռ: Արահետի անվանումը կապված է ջրվեժից ոչ հեռու գտնվող գյուղի բարբառով «Կըրասի տախտ» /Կարասի բացատ/ տեղանվան հետ: Ուշագրավ է այն, որ տարածքում հայտնաբերվել են վաղ բրոնզեդարյան բնակավայրի և կիկլոպյան ամրոցի հետքեր, մեծ կարասների կտորներ, ինչը վկայում է նշված ժամանակաշրջանին բնորոշ կարասային թաղումների մասին: Արահետում ջրվեժից ոչ շատ հեռու է գտնվում նաև միջնադարյան մատուռն իր խաչքարերով /13-րդ դար/: Արահետն ունի 2,5կմ երկարություն: Սկիզբ է առնում Հաղարծին գյուղի վերջնամասում գտնվող Աղստև գետի վրայի կամրջից:

## Պանորամա արահետ

«Պանորամա» քայլարշավային ուղին շրջանաձև  է դասակարգվում է, որպես դյուրին ուղի, սակայն քայլուղու սկզբնական հատվածը բավական թեքություն ունի և ճանապարհին կան դժվարանցանելի վայրեր: Քալարշավային ուղին սկիզբ է առնում «Դիլիջան» գարեջրի գործարանից և անցնում ինչպես համայնքային, այնպես էլ «Դիլիջան» ազգային պարկի տարածքով: Այն իր մեջ ընդգրկում է 5 պիկնիկի վայրեր, պատմական փոքր Դիլի գյուղատեղին՝ հին գերեզմանոցով և «Խաչեր» կոչվող սրբավայրով, և որպես նպատակակետ է հանդիսանում «Թթու ջուր» կոչվող հանքային ջրի աղբյուրը:

## Տրանսկովկասյան արահետ

Տրանսկովկասյան արահետը տարածաշրջանային արահետային ցանց է, որը կազմում է մոտավորապես 3000 կմ՝ Սև ծովից մինչև Արաքս գետ:Հայաստանի տարածքով ձգվում է 200 կմ երկարությամբ, որից 85 կմ-ը անցնում է  «Դիլիջան» ազգային պարկ»-ի տարածքով: Այն ազգային պարկում բաժանված է իրար հաջորդող մի քանի կարճ հատվածների:

Խաչարձանից Գոշ լիճ
Գոշ լճից Գոշավանք
Գոշավանքից Պարզ լիճ
Պարզ լճից Դիլիջան (Թախտա)
Թախտայից Դիլիջանի կենտրոն
Դիլիջանից Ջուխտակ վանք
Ջուխտակ վանքի Հաղարծինի վանք
Հաղարծինի վանքից Հովք

Կից ֆայլով ներկայացվում է նաև «Դիլիջան» ազգային պարկի զբոսաշրջիկների կողմից առավել հաճախակի պահանջված երթուղիների բնութագրերն ու քարտեզները:

«Աղավնավանք տեղամաս» մասնաճյուղում գործում է վրանային ճամբար, որն ունի 20 վրանատեղի, վրանները իրար միացնող ուղեգոտիներ, խարույկատեղի, լվացարան, սանհանգույց և հարակից նստարաններ:

«Ազնվացեղ եղջերուի վերաբնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում «Դիլիջան» ազգային պարկում 2013 թվականից ի վեր ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) և կողմից իրականացվում է «Կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցումը Հայաստանում» ծրագիրը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության (BMZ)՝ KfW Զարգացման բանկի միջոցով, WWF Գերմանիայի, Կովկասի բնության հիմնադրամի (CNF) աջակցությամբ:

2022 թվական հոկտեմբերին «Դիլիջան» ազգային պարկի տարածք, որպես փորձնական խումբ՝ ազատ է արձակվել թվով 3 եղջերու:
2024 թվականի սեպտեմբերի 13-ին ազատ է արձակվել թվով 10 եղջերու՝ երկրորդ խումբը :
2025 թվականի մայիսի 22-ին, Կենսաբազմազանության միջազգային օրվա շրջանակում, Լոռու մարզի Եղեգնուտ գյուղի շրջակա անտառներում բնություն է արձակվել թվով 9 կովկասյան ազնվացեղ եղջերու՝ երրորդ խմբաքանակ:

«Կովկասյան ազնվացեղ եղջերուների բազմացման կենտրոն»-ի մուտքավճարների մասին տեղեկատվություն՝
Մինչև 7 տարեկան երեխաներ - անվճար,
7 տարեկանից բարձր ՀՀ քաղաքացիներ - 500 դրամ,
7 տարեկանից բարձր օտարերկրյա քաղաքացիներ - 1000 դրամ,
Դպրոցական էքսկուրսիաներ՝ 10-15 անձի դեպքում - 4000 դրամ,
Դպրոցական էքսկուրսիաներ՝ 16-25 անձի դեպքում - 6000 դր

«Դիլիջան» Ազգային պարկի այցելուների կենտրոնում կարող եք վարձակալել վրաններ, քնապարկեր, ձեռնափայտեր և այլ էկոտուրիստական պարագաներ:

Անհրաժեշտ է նաև ճշգրտել քարտեզի վրա ազգային պարկի տեղադիրքը: Առավել նպատակահարմար է նշել վարչական շենքի տեղադիրքը՝ 40⁰ 44' 51'' N 44⁰ 52' 05'' E: